

ԳՐԻԳՈՐԻՍ ԳԱԼԵՄՔՅԱՐՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ա. Ա. ԱՄԱՏՐՅԱՆ

19-րդ դարի երկրորդ կեսը Աշխատությունը է հայ ժողովրդի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի նոր որակական փոփոխություններով: Մշակույթի ընդհանուր վերելքի հետ միասին զարգացում է ապրում և պարբերական մամուլը, որն արդյունք էր հայ ժողովրդի զարթոնքի, հայ գաղթավայրերի ուժեղացման և հասարակական հոսանքների, քաղաքական կուսակցությունների լայն գործունեության: Այս պայմաններում հիմք դրվեց պատմագիտական նոր ճյուղի՝ պարբերական մամուլի պատմությանը, որի հիմնադիրներից մեկը մեզանում դարձավ Գրիգորիս Ժայրագույն վարդապետ Գալեմբյարյանը (1862—1917):

Գրիգորիս Գալեմբյարյանը ծնվել է Վ. Պոլսում: Նախնական կրթությունը ստացել է ճննդավայրում, իսկ 1875 թ. մեկնել Վիեննա՝ Մխիթարյանների մոտ ուսումը շարունակելով: 1880 թվականից նա դարձել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ և 1885 թվականից որպես ուսուցիչ աշխատել միաբանության տարբեր դպրոցներում: Դրա հետ մեկտեղ Գր. Գալեմբյարյանը զբաղվել է գիտական, հետազոտական աշխատանքներով: Նրա ուսումնասիրությունների շրջանակները բավականին ծավալուն են և ընդգրկում են պատմաբանասիրական, լեզվաբանական, մատենագիտական և մամուլի պատմության բնագավառները: Նրա բեղմնավոր գրչի արգասիքն են «Ցուցակ հայերեն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Մյունխեն» (Վիեննա, 1892), «Ոսկեդարեան և ոչ-ոսկեդարեան հայերենի խնդիրը» (Վ. Պոլիս, 1903), «Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացոյ Ընդդէմ աղանդոց մատենին» (Վիեննա, 1919), «Կենսագրութիւն Սարգսի արքեպիսկոպոս Սարաֆեան և ժամանակին հայ կաթողիկէայք» (Վիեննա, 1908), «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկէայք» (Վիեննա, 1915) աշխատությունները: 1897 թվականին նա գերմաներենից թարգմանել և հրատարակել է Հենրիխ Գեյցերի «Պատմություն հայոց համառոտ» աշխատությունը:

19-րդ դարի 2-րդ կեսին հայ պարբերական մամուլի քանակական և որակական աննախադեպ աճը Գր. Գալեմբյարյանին հանգեցնում է այն ճիշտ եզրակացությանը, որ հայ մամուլի ուսումնասիրությունը կարոտ է գիտական մոտեցման:

Հայ մամուլի պատմության վերաբերյալ աղբյուրագիտական գործերի շարքը լրացնելու էկավ 1887 թվականից Վիեննայի Մխիթարյան միաբանության «Հանդես Ամսօրեայ» հայագիտական հանդեսի էջերում պարբերաբար հրատարակված Գր. Գալեմբյարյանի «Պատմութիւն հայ լրագրութեան, ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը» աշխատությունը¹, որն ընդգրկում էր հայ մամուլի պատմության 1794—1860 թթ. ժամանակաշրջանը: Սույն աշխատությունը (մասնակի լրացումներով) հետագայում լույս տեսավ առանձին գրքով (Վիեննա, Ռ. Ա., 1898): Երկար դադարից հետո, 1897 թ. «Հանդես Ամսօրեայի» էջերում Գր. Գալեմբյարյանը սկսում է տպագրել «Պատմութիւն հայ լրագրութեան 1860 էն մինչեւ մեր օրերը» աշխատությունը²:

Հայ մամուլի պատմության բնագավառում Գր. Գալեմբյարյանի աշխատությունը ժամանակի հաջողված, պատշաճ գիտական մակարդակի առաջին գործն է, ուր արժեքավորվում է առհասարակ լրագրության պատմությունը և մասնավորապես բարձր է գնահատվում հայ լրագրության պատմությունը:

Ի տարբերություն նախորդ շրջանի ուսումնասիրողների, Գր. Գալեմբյարյանը իր առջև նպատակ էր դրել գրել ընդհանրապես հայ լրագրության պատմություն, գնահատել այն, նիստամանակ հիշատակելով ձեռքի տակ եղած աղբյուրները: Այսպիսի նպատակն ինքնին ցույց է տալիս, որ հեղինակը հայ մամուլի պատմությանը մոտեցել է որպես գիտության,

¹ Տե՛ս «Հանդես Ամսօրեայ», 1887, թիւ 3, թիւ 4, թիւ 5, թիւ 6, թիւ 8, թիւ 10, թիւ 12, 1888, թիւ 4, թիւ 6, թիւ 11, թիւ 12, 1889, թիւ 1, թիւ 5, թիւ 8, թիւ 9, 1890, թիւ 9, թիւ 11:

² Տե՛ս «Հանդես Ամսօրեայ», 1897, թիւ 2, թիւ 4, թիւ 9:

գույց տվել Գրա աստիճանական ձևավորումը՝ աղբյուրների և գրականության համառոտ սենսության միջոցով: Իր հետազոտությանը նա ընթերցողին ոչ միայն գոտ պատմական տեսություն է ներկայացնում, այլև մատենագիտական կարևոր աշխատություն: հիմնականում նյութեր քաղելով հայ մատենագիտության մասին ձեռքի տակ եղած աղբյուրներից³ և մասնավորապես օգտվելով նաև հայ լրագրության առկա աղբյուրներից:

Հարկ է սակայն նշել, որ Գրա ուշադրությունից վրիպել են արդեն իր ժամանակ հրապարակված որոշ ուսումնասիրություններ⁴, որոնց մեջ քննարկված են նաև մամուլի պատմության հարցեր:

Ազգի պահպանման, հարատևման գործում մեծ տեղ հատկացնելով քաղաքականության և գիտության կատարած դերին, Գր. Գալեմբյարյանը նշում է. «Ով որ այս երկու տարրներն իրարմէ կ'ուզէ անջատել, ազգային գոյութեան եւ կենդանութեան հիմը խարխալելու վտանգի մէջ կը դնէ: Եւ այս պատճառաւ՝ ինչպէս ազգաց կենաց յայտարարն է, ըսինք, քաղաքականութիւն եւ ուսումնականութիւն, նոյնպէս լրագրութեան կենաց նշաններն են սոյն երկուքը»⁵: Ըստ այդմ Գր. Գալեմբյարյանը հայ մամուլը բաժանում է երկու մասի՝ քաղաքական և գրական:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մամուլի պատմությունը աստիճանական զարգացում է ապրում, կապված հայ ժողովրդի պատմական ուղու, քաղաքական-հասարակական իրադարձությունների հետ, Գր. Գալեմբյարյանը հայ մամուլի պատմության հստակ շրջանաբաժանում է կատարում.

Ա. շրջան: Ի սկզբանէ հայ լրագրութեան մինչեւ 1840:

Բ. շրջան: 1840էն մինչեւ 1860:

Գ. շրջան: 1860էն մինչեւ մեր օրերը⁷:

Այս պարբերացումն այնքան կատարյալ է, որ այսօր ևս ընդունված է հայ լրագրության պատմաբանների կողմից, թեև աշխատության մեջ պատմականորեն մեկնաբանված չէ նշման շրջանաբաժանումը:

Արևմտահայ մամուլի սկիզբը հիմնականում կապվում է Թանգիմաթի շրջանի բարեփոխումների հետ (1839 թ. Աբդուլ Մեջիդ սուլթանի հրապարակած «Նաթըլ-Օերիֆը»): Լկո բարեփոխումներով քրիստոնյաներին հնարավորություն էր տրվում զարգացնել իրենց մշակույթը, ներքին կրթական, լուսավորական կյանքը և մահմեդականների հետ ունենալ հավասար քաղաքացիական իրավունքներ: Արևմտյան Հայաստանում այն երբեք չկիրառվեց: Հայ զավառացի ժողովուրդն առաջվա նման ենթարկվում էր դաժան հարստահարությունների, գտնվելով մտավոր աղքատության մեջ: Այնպես որ շատ վաղ էր զավառում հայ մամուլի մասին խոսելը: Սակայն Կ. Պոլսի, ինչպես և Ջմյուռնիայի հայերն օգտվեցին այդ իրավունքից, և հենց այս քաղաքներում է, որ ծաղկում ապրեց հայ լրագրությունը:

«1840 էն ետքը» ընկած ժամանակաշրջանը Գր. Գալեմբյարյանը որակում է «փոփոխամիտ երիտասարդութիւն»: Պարբերականների քանակական արագ աճի պատճառը նա տեսնում է դրա մեջ, բնավ չհիմնավորելով երևույթը Թուրքիայում տեղի ունեցած հասարակական տեղաշարժերով: Արևմտահայ հատվածի կյանքի պայմանների փոփոխությամբ և մտավորականության նյութական անապահովությամբ էր պայմանավորված և պարբերականների արագ թվական աճն ու կարճատև կյանքը:

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել 1863 թ. թուրքական կառավարության հաստատած արևմտահայոց Ազգային սահմանադրությունը, որից հայ լրագրությունը և հրապարակախոսությունը մեծապես օգտվեցին: Արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող կանոնադրության արգասիքն էին 1860 թվականից օրեցօր աճող պարբերականները, որոնք մայրաքաղաքում հասարակական մտքի և ուղղությունների արդյունք էին:

Ի տարբերություն նախորդների, Գր. Գալեմբյարյանն իր աշխատության մեջ փորձում է հայ մամուլի պատմության ավելի մեծ ժամանակաշրջան ընդգրկել, տալ իրեն հայտնի պարբերականների մասին հնարավորին չափ սպառիչ տեղեկություններ (պարբերականի անունը,

³ Գ. Զարբհանայան, Պատմութիւն հայերէն դպրութեանց, Բ, Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878: Նոյնի՝ Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883: Մոյշէ վ. Դուրբան, Պատմութիւն հայ Մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885:

⁴ «Եւրոպա», 1850, թիւ 28, Արգար Յօհաննիսեանց և Արթուր Լալաթ, Հայերէն Մատենադարան, Լայքիկ, 1886, Յարոյ, Հայոց մամուլը Ռուսաստանում եւ Կովկասի մէջ, Թիֆլիս, 1878:

⁵ Э. Дюлорне, Нынешнее армяне, Тифлис, 1856. Дадян Мкртч-Бей, Современное армянское общество, Тифлис, 1878.

⁶ Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1887, թիւ 4, էջ 58:

⁷ Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1887, թիւ 5, էջ 74:

պարբերականությունը, հրատարակման տարիները, վայրը, խմբագրի, հրատարակչի անունները, տպարանը, պարբերականների ծախսը, էջերի քանակը և այլն): Տեղեկություններ, որ առաջին անգամ իրենց բնութագիրը գտան Գր. Գալենքյարյանի հիշյալ աշխատությունում, և որպես այդպիսին «Պատմություն հսկ լրագրությանը» պետք է գնահատել իրեն հայ մամուլի և հրատարակչությունների ուսումնասիրության կարևոր փուլ:

Զնայած նյութերն աշխատությունում փորձել է շարադրել ժամանակագրական կարգով, բայց նկատվում են վրիպումներ: Ինչպես օրինակ «Տարեգրություն» հրատարակման 1799—1802 թթ.⁸ փոխարեն Գր. Գալենքյարյանը նշում է 1800—1802 թթ.⁹, «Թագվիմի վաքայի» հրատարակման տարեթիվ է հիշում 1832—1833 թթ.¹⁰, այնինչ հրատարակվել է նաև 1840 թ.¹¹: Կամ ասենք «Արշալոյս Արարատեանի» հրատարակման տարեթիվ է նշում 1840—1886 թթ.¹² (այն կրկնել է նաև Գ. Լևոնյանը)¹³, այնինչ հրատարակվել է մինչև 1884 թ. դեկտեմբերի 29-ը¹⁴:

Յուրաքանչյուր պարբերականի պատմության, բովանդակության մեջ խորամուխ լինելով կարող ենք քիչ թե շատ պատկերացում կազմել հայ լրագրության անցած պատմական ուղու մասին:

Այստեղից պայմանների հետ կապված, հաճախ պարբերականների հրատարակությունը ընդհատվում էր, խախտվում պարբերականությունը, փոխվում հրատարակման վայրը, գաղափարական ուղղությունը, շատ դեպքերում՝ նաև պարբերականի անունը, և այս բոլոր փոփոխությունները հնարավոր չէր արտացոլել աշխատության մեջ: Օրինակ, «Հայելի» պարբերականի մասին ընդամենը գրում է, որ լույս է տեսել Կալկաթայում¹⁵: Նույնիսկ անվանումն ամբողջական չէ, որ է՝ «Հայելի Կալկաթեան»¹⁶: Եվ քանի որ թվականը ևս նշված չէ, տեղի է ունենում ժամանակագրական խախտում: Այդ պարբերականի մասին Գր. Գալենքյարյանը իր ուսումնասիրության մեջ խոսում է «Թագվիմի վաքայի» հետ:

Գր. Գալենքյարյանի աչքից վրիպել է այն, որ «Լրո գիրը» «Թագվիմի վաքայի, Լրոյ գիր» թուրքական պաշտոնաթերթի զուտ կրկնօրինակը չէ, այնտեղ տպագրվել են նաև ազգային, հայ կյանքին նվիրված նյութեր, որոնք բնականաբար տեղ չէին կարող գտնել «Թագվիմի վաքայի» մեջ:

Գր. Գալենքյարյանը բավարարվում է միայն «Մուսայք մասեացի» առաջին շրջանի տարեթիվերը նշելով՝ 1857—1858¹⁷: Բայց պարբերականը վերստին հրատարակվել է «Ջայն ընկերասիրական» վերնագրով 1863—1866 թթ.¹⁸:

Աշխատությունում տեղ են գտել թերթերի, հանդեսների ուղղվածության, լեզվի մասին երթադրյալ, ոչ հավաստի փաստեր: Օրինակ՝ «Ազդարար Բիզանդեանի» մասին խոսելիս Գր. Գալենքյարյանը նշում է, որ աշխարհաբար լեզուն Կ. Պոլսի մեջ ընդունելություն չգտնելու պատճառով հիմնադրող համարից հետո բաժանորդների խնդրանքով այն տաճկերենի է փոխվում, թեև դա ևս չի փրկում դրությունը, և շարաքաթերթը փակվում է: Գր. Գալենքյարյանի այն հավաստիացումը, որ թերթը փոխվում է թուրքերենի՝ թուրք ու եվրոպացի բաժանորդներ գտնելու համար, հիմնավոր չէ, որովհետև թերթը բազմաթիվ ընթերցողներ ուներ և բաժանորդների թիվն ապահովված էր: Իսկ այն, որ «Ազդարար Բիզանդեանը» փոխում է լեզուն, բացասական երևույթ էր պոլսահայ լրագրության համար, թեև որովայն պատճառով, որ փաստորեն վերանում էր ևս մեկ հուլերեն թերթ:

Հայացքներով պահպանողական՝ Գր. Գալենքյարյանը հիմնականում պարբերականները գնահատելիս խիստ է մոտենում նորաստեղծ բուրժուական, ժողովրդավարական մամուլին և ավելի մեղմ է խոսում պահպանողական պարբերականների մասին:

Այս առումով իրեն շատ ավելի համակրելի էր «Արշալոյս Արարատեանի» հիմնադիր-խմբագիր Ղ. Պալդազարյանը, որ հետևում էր չափավոր, զուսպ ուղղության, քան «Մեղուի»

⁸ Մ. Բարլոյան, Հայ պարբերական մամուլը (1784—1980), Երևան, 1986, էջ 24:

⁹ «Հանդես Ամսօրեայ», 1887, թի 6, էջ 89:

¹⁰ «Հանդես Ամսօրեայ», 1887, թի 10, էջ 149:

¹¹ Մ. Բարլոյան, նշվ. աշխ., էջ 25:

¹² «Հանդես Ամսօրեայ», 1887, թի 12, էջ 181:

¹³ Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Պատմական տեսություն սկզբից մինչև մեր օրերը (1784—1884), Ալեքսանդրապոլ, 1895, էջ 37:

¹⁴ Ա. Խառատյան, Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը (1858—1896), Եր., 1984, էջ 56—57:

¹⁵ «Հանդես Ամսօրեայ», 1887, թի 10, էջ 150:

¹⁶ Մ. Բարլոյան, նշվ. աշխ., էջ 24:

¹⁷ «Հանդես Ամսօրեայ», 1980, թի 11, էջ 260:

¹⁸ Մ. Բարլոյան, նշվ. աշխ., էջ 29:

խմբագիրը՝ «Քամարձակագիր» Հ. Սվանյանը, որի հակադրվելը թուրքական իշխանություններին նա միշտ չի համարում, քանզի «անմտություն է քննադատել զայնպիսիս, որոց տկամքը արագ են ի լսել եւ ձեռք՝ հզոր ի հարկանել»¹⁷։ Ծարուհակելով մեղադրել Հ. Սվանյանին զգուշություն չցուցաբերելու և «Մեղու» պարբերականում անխնա «ազգասեր» տեղանք ծաղրելու համար, Գր. Գալեմջարյանը թեև նշում է, որ «Մեղուն» հարգի է եղել «ողջամիտ անձանց», բայց ոչ մի խոսք չի ասում այդ պարբերականի սկզբունքայնության, նրա իսկապես հրատարակախոսական ու երգիծական մեծ արժեքի, օգտակար հրատարակչությունը հաստատելու և կիրառելու գործին նկատելու հատկանշական դերի մասին, վերաբերմունք, որն արդեն պարբերաբար նկատվում է ազգային հարցերում կտրուկ դիրքորոշում, սկզբունքայնություն, արմատական ուղղություն դրսևորող թերթերը գնահատելիս։

Սովորաբար քննադատությունը մերժող Գր. Գալեմջարյանը բացառություն է անում Վիեննայի Միաբարյանների հրատարակած «Եւրոպա» (1847—1868) շաբաթաթերթի հասար, որպես դրական երևույթ նշելով այն փաստը, որ թերթը «քննադատական ոգի է կուռացնողորդներ»²⁰։ Մի բան պարզ է, որ Գր. Գալեմջարյանը փորձում է անտարբեր կամ սևանառ թվացող դիտողություններով իր համակրանքը քողարկել «Եւրոպայի» հասցեին։ Հիմնավոր դատողություններով նա ցույց է տալիս «Եւրոպայի» ունեցած վաստակը արևմտահայ գրական աշխարհաբարի զարգացման գործում, մասնավորապես գիտական լեզվի մշակագործման մեջ։ Նշենք, որ ինչքան էլ իր գնահատականներում մատենագետը խիստ լլներ դեմոկրատական պարբերականների նկատմամբ և քարյացկամ՝ պահպանողական հանդեսների հանդեպ, այսուհանդերձ, նա շատ դեպքերում կարողանում է օբյեկտիվ գնահատել պարբերականների տեղը ու դերը հայ իրականության լուսաբանման մեջ։

Գր. Գալեմջարյանը իր ժամանակի և միջավայրի ծնունդն էր և, որպես միաբանության հանդարտ ու խաղաղ ներկայացուցիչ, նախընտրում էր հայ հասարակության զարգացման հանգիստ և աստիճանական ուղին։

Ուշադրություն է գրավում նաև այն, որ Գր. Գալեմջարյանը գրեթե սկզբունքորեն իր մատենագիտությունից դուրս է թողել հայատառ թուրքերեն մամուլը։ Ասում ենք գրեթե, որովհետև շուրջ երեք տասնյակից ավելի այդպիսի պարբերականներից (որոնք լույս են տեսել 1840—1880-ական թթ.) նա հիշատակում է միայն մեկը՝ «Մերիտի թիմարեթ» («Առևտրական հանդես») երկշաբաթաթերթը, թերևս այն պատճառով, որ թերթը լույս էր տեսնում նաև հայերեն։ Կնշանակի, Գր. Գալեմջարյանը անտեսում է հայատառ թուրքերեն մամուլի դերը, մինչդեռ այդ մամուլի բովանդակությունը ամբողջովին հայ ազգային կյանքն է, արևմտահայության մտավոր, կրթական, լուսավորական և հասարակական առօրյան։

Հայատառ թուրքերեն հրատարակությունների սկզբնավորումն ու զոյությունը կապվում է օսմանյան Թուրքիայում ապրող թուրքախոս հայ հատվածների հետ, որոնք ապրում էին Իրենց համայնքի կյանքով, և մի մասը՝ կտրված հայ լուսավորչական համայնքից։ Հենց այս պայմաններում հայատառ թուրքերեն պարբերականների ղեկավարները հետամուտ էին պահպանել դրանց ազգային ոգին ու դիմագիծը, տարածել լուսավորություն և կրթություն։

Գր. Գալեմջարյանի այս մտնեցումը՝ հայատառ թուրքերեն մամուլի անտեսումը, մեր մամուլի մատենագիտական աշխատությունների մեջ հարատևեց երկար ժամանակ, և հավանաբար, դա է պատճառը, որ այդ մամուլն առայսօր քիչ է ուսումնասիրված²¹։

Մեր կարծիքով, թեկուզ իր գոտև հայկական բովանդակության համար հայատառ թուրքերեն մամուլը (հաշվի առնելով նաև մեր ազգային պատմության լուրահատկությունը) իր արժանի տեղը պետք է գրավի հայ մամուլի պատմության և նրա մատենագիտության մեջ։

Հարկ ենք համարում նշել, որ Գր. Գալեմջարյանը հիմնականում անտեղյակ է արեւելահայ մամուլի պատմությանը, թեև վկայակոչում է Հարոյին։

¹⁷ «Հանդես Ամսօրեայ», թիւ 12, էջ 192։

²⁰ «Հանդես Ամսօրեայ» 1888, թիւ 12, էջ 218։

²¹ Բավական է ասել, որ Գ. Լևոնյանը հայատառ թուրքերեն մամուլը հանել է հայերեն պարբերականների շարքից և ներկայացրել առանձին ցանկով («Թուրքիայում լույս տեսած հայատառ թուրքերեն պարբերականներ» վերնագրի ներքո), իսկ Հ. Պետրոսյանը առհասարակ ոչ մի խոսք չի ասում դրանց մասին։ Այն, որ հայ մամուլի ամենավերջին՝ Մ. Բարսեղյանի կազմած մատենագիտությունը այս տեսակետից չափազանց աղքատ է, թերևս Գր. Գալեմջարյանի վերոհիշյալ վերաբերմունքի մեթոդյա դրսևորումն է։ Հայատառ թուրքերեն մամուլի մասին տե՛ս Գ. Ստեփանյանի «Հայատառ թուրքերեն հայ մամուլ» հոդվածը, «Հայ պարբերական մամուլի պատմություն» աշխատության 1-ին գրքում, (Երևան, 1968, էջ 289—274) և Հ. Ստեփանյանի կազմած «Հայատառ թուրքերեն պարբերական մամուլ», (Երևան, 1978) աշխատությունը։

Չնայած այս ամենին, Գր. Գալեմկյանի աշխատությունը ժամանակի գիտական ընդունյալ միակ գործն է թե՛ նյութի ընտրությամբ, թե՛ ժամանակաշրջանի ընդգրկմամբ: Աշխատությունը առայսօր մատենագետների կողմից օգտագործվում է որպես սկզբնաղբյուր. հիմնականում քավարարելով մատենագիտական պահանջները:

А. А. АСАТРИАН—Григорие Галемкярян и вопросы истории армянской печати.—Одним из исследователей истории армянской периодической печати был Григорие Галемкярян (1862—1917), который с 1887 г. стал печатать на страницах «Андес амсореа» «Историю армянской журналистики с начала до нашего времени», а затем, с 1897 г.—«Историю армянской журналистики с 1860 г. по наши дни». В этих работах он периодизирует историю печати, определяет место и роль периодических изданий в деле освещения и отражения армянской действительности. Исследования Галемкяряна как по актуальности, так и по охвату и анализу материала исключительное явление в арменоведении.